



# ՄիաՄանթո

## Աղօթք

Կարապետները թունաւորուած լիճերէն այս իրիկուն յուսահատօրէն գաղթեցին,  
Ու տրտում քոյրեր, թիարանին պատերուն տակ, եղբայրներ կ'երագնէն...  
Շուշանով ծաղկած դաշտերուն վրայ պատերագմները վերջացան,  
Ու գետնափորներու մէջէն գեղեցկուիիներ դագաղներու կը հետեւին,  
Եւ իրենց դէմքերը հողին ծռած՝ երգեցին.

«Օ՛, աճապարեցէ՛ք, մեր ցաւագին միսերը սատեցան այս անիրաւ  
խաւարներէն...

Աճապարեցէ՛ք դէպի մատուռն, ուր կեանքն աւելի գթած պիտի ըլլայ.  
Գերեզմանոցին մատուռն, ուր մեր եղբայրը կը քնանայ...»:

Հոգիիս մէջ այրի կարապ մը կը տանջուի,

Ու հոն նոր թաղուած մեռելներուն վրայ

Աշուրներէս վար արիւն անձրեւ մը կը տեղայ...

Անդամալոյծներու բազմութիւններ կ'անցնին սրտիս ճամբաներէն,

Ու բոպիկ ոտքերով կոյրեր անոնց հետ՝

Աղօթողի մը պատահելու աստուածային յոյսով...

Եւ անապատներու կարմիր շուներն ամբողջ գիշեր մը լացին,

Յուսահատօրէն աւագներուն վրայ ողբալէ յետոյ,

Անձանօթ ցաւի մը համար, որ չի հասկցուիր...

Ու մտածումիս փոթորիկը անձրեւին հետ դաղրեցաւ.

Մառած ջուրերուն տակ ալիքներն անգթօրէն բանտարկուեցան.

Հսկայական կաղնիներուն տերեւները, վիրաւորուած թռչուններու նման,

Հոգեվարքի ճիշերով վար ինկան.

Եւ խաւարչտին գիշերն անհունօրէն ամայացաւ,

Ու մենատր ու արիւնտ լուսնկային հետ,

Մարմարեայ անշարժ ու բիրատր արձաններու պէս՝

Մեր հողին բոլոր մեռելներն իրարու համար աղօթքի ելան...